

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XXX ԳԻՏԱԿԱՆ
ՆԱՍՏՐՋԱՆԸ

2009 թ. հուլիսի 14–16-ը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմանից կազմակերպված աշխատավայր՝ արևելագետների միջազգային XXX գիտական նատաշրջանը։ Այն նվիրված էր Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի, Կովկասի երկրների ու ժողովուրդների պատմության, միջազգային հարաբերությունների և արևելյան մշակույթի, ինչպես նաև ցեղասպանության, իսլամագիտության արդիական մի շարք հիմնահարցերին, ներկա քաղաքական զարգացումներին։ Եօրյա միջոցառման ընթացքում իրենց գեկուցումներով հանդես եկան երիտասարդ արևելագետներ, հայագետներ Հայաստանից, ինչպես նաև արտերկրից՝ Իրանից, Թուրքիայից, Բուլղարիայից, Հնդկաստանից։

Հուլիսի 14-ին լիազումար նիստը բացեց արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագիտների խորհրդի նախազահ Սոնա Գրիգորյանը: Ողջովնի խորով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարիսուղարյանը, Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանը:

Այնուհետև լսվեցին մի շարք գեկուցումներ (նիստի նախազահ՝ Ս. Գրիգորյան): Առաջին գեկուցը պ. գ. թ. Հ. Խորիկյանն էր՝ «Սատրապական Հայաստանի պատմական աշխարհագրության մի քանի հարցեր ըստ «Անաբասիս»-ի» թեմայով: Նա արձանագրեց, որ համաձայն «Անաբասիս»-ի վկայությունների՝ Սատրապական Հայաստանը կամ XIII սատրապությունը Քսենոփոնի ժամանակ շարունակում էր մնալ Արքեմենյան Պարսկաստանի խոչըր նահանգներից մեկը, և որի բնակչությունը հիմնականում հայկական ցեղերն էին: «Խեթա-հայկական լեզվամշակութային փոխառնչությունների շուրջ (ընդհանուր ակնարկ)» գեկուցման մեջ Հ. Հմայակյանը նշեց, որ բավականին մեծ թիվ են կազմում հայերեն և խեթերեն իմաստով իրարշատ մոտ բառերը: «Քեմալիզմի ուսումնասիրության մեթոդաբանական ու փուլային տարրերակման խնդիրները» խորագրով գեկուցումով հանդես եկավ պ. գ. թ. Վ. Տեր-Մաթևոսյանը՝ նշելով, որ Թուրքիայի պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի շուրջ բաղաքական ու զիտական հետաքրքրությունները առ այսօր շարունակում են իրենց կենսունակությունը: Պ. գ. թ. Ա. Հարությունյանը («Զինաստան-Իրան միջուկային համագործակցության շուրջ») արձանագրեց, որ Զինաստանը դեմ է Իրանի միջուկային գենքի ստեղծմանը, ոչ խաղաղ նպատակներով միջուկային ծրագրերի զարգացմանը:

Լիազումար նիստին հաջորդեցին երեք նիստեր, և աշխատանքները շարունակվեցին տարբեր դահլիճներում: Երկրորդ նիստում (ինստիտուտի նիստերի դահ-

լիճ, նիստի նախազահ՝ պ. գ. թ. Ա. Դումանյան), որը կրում էր «Թուրքագիտություն» խորագիրը, առաջնը զեկուցեց Ա. Ռուկանյանը՝ «Քափրքուլու զորաբանակի ստորաբաժանումները» թեմայով: Նա նշեց, որ քափրքուլուների հավաքագրումը կատարվում էր ուազմագերիներից (փենջ-ի էր) և դեկչիրմեհ (մանկահավաք, մանկածողով) համակարգով, այսինքն՝ կազմավորվում էր մի զորք, որը ոչ մի կապ չուներ թուրք կրօնուի հետ: «Գլխահարկն Օսմանյան կայսրությունում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Ա. Մարտիրոսյանը՝ նշելով, որ Օսմանյան կայսրությունում չկար կյանքի մի ոլորտ, տնտեսական մի զործունեություն, մարդկային մի հարաբերություն, որը զերծ լիներ հարկերից կամ սուրբքերից: Ա. Նալբանդյանը «Սելիմ III-ի բարեփոխումները որպես Օսմանյան կայսրության եվրոպականացման նախատիպ» զեկուցմամբ ներկայացրեց, որ այդ ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկվեցին Սելիմ III-ի (1789-1807) և Մահմուլ II-ի (1808-1839) օրոր: Երկրորդ աշխարհամարտից հետո ստամբուլահայության քաղաքական և մշակութային կյանքի որոշ իրադարձությունների լուսաբանմանն էր նվիրված Ա. Մելքոնյանի հաղորդումը («Ստամբուլահայությունը Երկրորդ աշխարհամարտից հետո (մինչև 1950-ական թթ. սկիզբ)»): Պ. Չավիլյանը (Թուրքիա) «1982 թ. սահմանադրությունը և ընդհանուր հայացք Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության վերաբերյալ» զեկուցմամբ հանգամանորեն ներկայացրեց այդ սահմանադրության ընդունման հանգամանքները և պատմությունը: «Ծուս-թուրքական ուազմատեխնիկական համագործակցության զարգացման միտումների շուրջ» խորագրով զեկուցում կարդաց Լ. Հռվիեկիյանը՝ նշելով, որ այս բնագավառում Թուրքիայի համագործակցության շրջանակներն ընդլայնվել են ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ երկրներից, Իսրայելից դեպի Ռուսաստան:

Երրորդ նիստը, որը կրում էր «Հին Արևելք» խորագիրը, տեղի ունեցավ ինստիտուտի Հին Արևելքի բաժնում (նիստի նախազահ՝ պ. գ. թ. Ռ. Ղազարյան): Ս. Խանգաղյանը հանդես եկավ «Էթնոգենեզի որոշ ասպեկտների մասին» զեկուցումով, վերլուծեց էթնոգենեզի առանցքային օրինաչափություններն ու առանձնահատկությունները, սուրստրատ և սուպերստրատ տարրերի փոխներգործության ձևերը, էթնոս հասկացության հիմնական չափանիշները: Հետաքրքրական զեկուցում կարդաց Ա. Մարգարյանը՝ «Կենդանառոր կահույքի կիրառման դրսորումները Հայկական լեռնաշխարհում (մինչև Ք. ա. 6-րդ դարը)» թեմայով: Ս. Բաղալյանը «Տարին և Ուրարտուի դիցարանի գերազույն եռյակը» զեկուցման մեջ անդրադարձավ Ուրարտուի դիցարանի գերազույն աստվածներ՝ Խալդիին, Թեյշեբային, Շիվինիին և նրանց զույգերին: Արմավիրից հայտնաբերված արձանագրություններից մեկի լեզվական ոճին և նրա պատմությանն էր նվիրված Գ. Գևորգյանի զեկուցումը՝ «Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկի գրական առանձնահատկությունների մասին» խորագրով:

Չորրորդ նիստը՝ «Արաբագիտություն» խորագրով, տեղի ունեցավ ինստիտուտի Արաբական երկրների բաժնում (նիստի նախազահ՝ պ. գ. թ. Լ. Զարությունյան): Նիստի առաջին զեկուցողը Լ. Սարգսյանն էր՝ «Կայսերական պահակագունդը և նրա դերը Արաբական խալիֆայության անկման գործում (750-842 թթ.)» թեմայով:

Ֆաթիմյան խալիֆայությունում XI դ. 70-ական թվականներից մինչև XII դ. 60-ական թվականների պատմությանը՝ «հայկական շրջանի» վեզիրի պաշտոնը վարած հայագի իսլամադավան՝ Բաղր Ալ-Գամալիի կյանքին և Եղիպտոսում նրա ծավալած գործունեության լուսաբանմանն էր նվիրած Ա. Առաքելյանի ուշագրավ գեկուցումը («Բաղր Ալ-Գամալիի Ալ-Արմանիի իշխանությունը Եղիպտոսում 1074-1094 թթ.»): Հետաքրքրական գեկուցմամբ հանդես եկավ Ն. Սամսոնյանը՝ «Հայ ուազմական գործիչների դերը սիրիական բանակում (1946-1970 թթ.)» թեմայով: Այդ գործիչներից էին գեներալ լեյտենանտ Արամ Կարամանուլյանը, գեներալ մայոր Հրանտ բեյ Մալոյանը, զորավար Ալբեր Քիլեջյանը, գնդապետ Ժողեք Բայրամյանին, սպաներ փոխգնդապետներ՝ Գրիգոր Հինդոյանը, Անտուան Գուշակյանը, Հիքմեթ Գուշակյան, Լևոն Դարաղությանը, Միքայ Կուղջինյանը, Սփրամ Սալաթյանը, Արշակ Սարաֆր և ուրիշներ: Պ. գ. թ. Գ. Գևորգյանը «Եղիպտոսի դիրքորոշումը 2008-2009 թթ. դեկտեմբեր-հունվար ամիսներին Իսրայելի և «Համասի» միջև պատերազմական գործողությունների նկատմամբ» գեկուցման մեջ անդրադարձավ նաև աշխարհի գերտերությունների՝ այդ իրադարձությունների հանդեպ որդեգրած քաղաքական քայլերին և որոշումներին:

Հուլիսի 15-ին գիտական նստաշրջանն ունեցավ չորս նիստ: Առաջին նիստը՝ «Խալամագիստություն» խորագրով, կայացավ ինստիտուտի նիստերի դահլիճում (նախագահ՝ պ. գ. թ. Ա. Փաշյան): Պ. գ. թ. Ն. Քոչարյանը հանդես եկավ «Հայերը որպես զիմմիներ վազ ումայում» թեմայով: Զեկուցման մեջ դիտարկվում էին վաղ միջնադարում VII դ. երկրորդ կեսից VIII դ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածում հայ-արաբական առաջին առնչությունները, դրա հետևանքով ձևավորված փոխհարաբերությունների նոր համակարգը: Նշվեց, որ հայերի և արաբների միջև դաշնագրերը կնքվում էին երկու կողմերի նախաձեռնությամբ, պայմանագրով նախատեսված հարկերը ձևական բնույթը էին կրում, շիզիան հիմնականում շնչից զանձվելու փոխարեն զանձվում էր ծիսից, և որ իսլամական իրավունքի առջև հայերը համարվում էին զիմմիներ: Մ. Բագինյանը «Արարա-մուսուլմանական պետության հզորության վերականգնման Սուլթանարիի «տեսությունը» գեկուցման մեջ անդրադարձավ պոետ ալ-Սուլթանարիի՝ արաբական էթնոսի և իսլամի վրա հիմնված հզոր պետության «տեսությանը»: Իսլամի պատմության ուսումնասիրության կարևոր խնդիրներից՝ Ումմայի՝ մուսուլմանական համայնքի դեկավարմանն առնչվող խնդիրների հետազոտությանն էր նվիրված Ն. Սահակյանի գեկուցումը՝ «Խալիֆա» ինստիտուտին վերաբերող որոշ հարցեր» խորագրով: Հետաքրքրական գեկուցմամբ հանդես եկավ Ա. Գրիգորյանը՝ «Սուլնիհական արմատական զաղափարախոսության արժեհամակարգը 2001 թ., սեպտեմբերի 11-ի ահարեկչական գործողություններից հետո (Ալ-Կահիդա)» թեմայով: Երկրորդ նիստը՝ «Յեղասպանագիստություն» խորագրով, տեղի ունեցավ ինստիտուտի Թուրքիայի բաժնում (նիստի նախագահ՝ Ա. Հովհաննիսյան): Ա. Պարսամյանը հանդես եկավ «Մշակութային ժառանգության ոչնչացումը որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս» թեմայով՝ նշելով, որ ցեղասպանությունը որևէ էթնիկ, ուսայական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական բնաջնջումն է, այլ նրա մշակութային ժառանգության համար անհանդաց առաջարկություն է:

յան ոչնչացումը, քանի որ էթնոս կամ ժողովուրդ հասկացությունն առավել ամբողջական իմաստ և նկարագիր է ստանում իր ստեղծած մշակութային արժեքներով: «Հայ տարագիրները Սիրիայում և արաբների վերաբերմունքը նրանց նկատմամբ (1915–1925 թթ.)» թեմայով զեկուցումով հանդես եկավ Ն. Մարգարյանը: 1915 թ. մայիսից Օսմանյան կայսրությունում սկսված տեղահանությունների և կոտորածների հետևանքով հայ տարագիրների մեծ մասը 1916 թ. կենտրոնացած էր Հալեպ ու Դամակոս քաղաքների տարածքում գտնվող ճամբարներում: Երիտրուրքական կառավարությունը համոզված էր, որ սիրիական անապատներում տեղի արար մուսուլմանները կշարունակեն իրենց գործը՝ վերջնականապես բնաջնջելով հայերին: Զեկուցողն արձանագրեց, որ Սիրիայի տարբեր շրջաններում բազմաթիվ արար պաշտոնյաներ, քաղաքացիներ (Հալեպի նահանգապետ Ջալալ բեյին, Ռաս Ուլ-Այնի կայսմակամ Յուսուֆ Ջիա բեյին, օսմանյան բանակի սպա Արդուլ Ղանի Ալ-Ջուդին, Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի որդին՝ Էմիր Ֆեյսալը) օգնության ձեռք են մեկնել հայ զաղթականներին: Ուշագրավ էր Ս. Կիրակոսյանի՝ «Հայաստանի Հանրապետության որբախնամ գործունեությունը նրա սահմաններից դուրս՝ Վրաստանում և Աղբեջանում» վերնագրով զեկուցումը: Ա. Գրիգորյանը «Գերմանիայի հայկական Սփյուռքի գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման և Գերմանիայի բռնքքական սփյուռքի դերը հայկածանաշողական գործողությունների մեջ» զեկուցման մեջ նշեց, որ եթե հայկական Սփյուռքի նպատակներից մեկն է հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա թուրքական Յ մլն-ոց սփյուռքի նպատակն այդ առումով հակառակն է: Երրորդ նիստը՝ «Գրականագիտություն» խորագրով, տեղի ունեցավ ինստիտուտի Իրանի բաժնում (նախագահ՝ պ. գ. դ. Ա. Կողմոյան): Ս. Ալլահվերդյանը՝ «Նարեկացու և Ռումիի պոետիկայում Սուլր գրքերի արտացոլման իննորի շուրջ («Մատյան», «Մասնավի»)» զեկուցման մեջ արձանագրեց, որ Նարեկացու «Մատյանը» հայ ժողովրդի կողմից պաշտվել է որպես Սուլր Գիրը: Անդրադառնալով Ռումիի «Մասնավիին»՝ զեկուցողն այն համարում է «բոլոր ժամանակների խոշորագույն հոգևոր ստեղծագործություն»: Երկու պոեմներն էլ հագեցած են սուրբգրային թեմաներով և պատկերներով, սակայն յուրովի: «Մասնավիում» տեղ են գտել Ղուրանի և իպամական սրբերի ու իմամների խոսքերը, հայիսները և մանրապատումները, իսկ Նարեկացու «Մատյանում» առավել ակնհայտ են սաղմոսների հետ ունեցած աղերսները: Բ. գ. թ. Ա. Փաշայանը հաղես եկավ «Պատկերավորման միջոցները արևելյան պոեզիայում (Ռուդարիի օրինակով)» զեկուցմամբ: Ս. Սիմոնյանը «Սուլրար Սեփեհրու պոեզիան» զեկուցման մեջ անդրադառնալ արդի պարսից բանաստեղծության ամենաակնառու ներկայացուցիչ Սուլրար Սեփեհրու ստեղծագործությանը (1928–1980), նրա բանաստեղծական մտածելակերպին, ով արդեն իր կենդանության օրոք ճանաչված էր և՝ որպես նկարիչ, և՝ որպես բանաստեղծ:

Չորրորդ նիստը՝ «Լեզվաբանություն» խորագրով, շարունակվեց Արարական երկրների բաժնում (նախագահ՝ բ. գ. դ. Մ. Խաչիկյան): Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան Է. Խաչատրյանը «Թերվող լեզվական միավորների (Սուլրարար) տեսակները» և բ. գ. թ. Հ. Աղաբաբյանը («Տրամարանական, լեզվաբանական և հոգե-

բանական շերտերը քերականական կառավարման համակարգում»): Բ. գ. թ. Մ. Մանուկյանը հանդես եկավ «Թաքուցված անունը (անձնական դերանուն հասկացության համարժեքը) որպես ,ISM MUDMAR-ի արտահայտման մակարդակի միավորների թաքուցման մասնավոր դեպք» զեկուցմամբ: Մ. Սարգսյանը «Բայանման գործառությամբ մասնիկներով իրացված ասուլյների ձևաշարահյուսական և ակտուալ անդամատման առանձնահատկությունները գրական արարերենում» զեկուցման մեջ նշեց, որ նախադասության ձևաշարահյուսական անդամատման հիմքում ընկած է անդամների բաժանումը: «Որոշյալի և անորոշի արտահայտման միջոցները չինարենում և բուլղարերենում» խորագիրը կրող զեկուցումով հանդես եկավ Ա. Ցանկովան (Բուլղարիա):

Հուլիսի 16-ին գիտական նստաշրջանի առաջին նիստը՝ «Մշակութաբանություն» խորագրով, շարունակեց իր աշխատանքը Հին Արևելքի բաժնում (նախագահ՝ Հ. Հմայակյան): Առաջին զեկուցողը Ա. Ալեքսանյանն էր՝ «Թուրքական թատրոնի հիմնադրումը և առաջին հայ դերասանուհիները» թեմայով: Թուրքական թատրոնի սկզբնավորումը և առաջին հիսուն տարիների պատմությունը սերտորեն կապված է հայ թատերական գործիչների անվան հետ՝ պայմանավորված նրանով, որ Օսմանյան կայսրություն թափանցող եվրոպական նորամուծությունների առաջին արձագանքողը և կրողները հայերն ու հունացիներն էին: Արևմտահյա և թուրքական բեմի լավագույն դերասաններն ու դերասանուհիներն էին՝ Ստ. Էքյանը, Թ. Ֆատուլյանը, Ս. Մնակյանը, Ս. Պենկյանը, Դ. Թրյանը, Վ. Աճեմյանը, Ա. Փափազյանը, Մ. Ծաղիկյանը և ուրիշներ: «Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն (Սրբոց Հակոբյանց միաբանություն)» խորագրով զեկուցման մեջ Վ. Պողոսյանը հանգամանորեն ներկայացրեց պատրիարքության պատմությունը, որը դարեր շարունակ եղել է Երուսաղեմի համարքիստոնեական սրբատեղիների պահպանը: Ուշագրավ ելույթով հանդես եկավ Խորեն արեդա Հովհաննիայանը (Հնդկաստան)՝ «Կալկաթայի հայ գաղութի պատմական ժառանգության լուս վկան՝ Սուրբ Նազարեթ եկեղեցին» թեմայով: Զեկուցողը նշեց, որ հնդկահայության հարյուրամյակների պատմության լուս վկան՝ Ս. Նազարեթ եկեղեցին, գտնվում է Հնդկաստանի Արևմտյան Բենզալիա նահանգի մայրաքաղաք Կալկաթայում: Տեղի գաղութը՝ որպես ազգային կազմակերպություն, ձևավորվեց 1724 թ., երբ Աղա Նազարեթի առատաձեռնությամբ կառուցվեց Ս. Հովհաննես Կարապետ քարաշեն եկեղեցին: Աղա Նազարեթի եկեղեցին մոտակա Զինսուրա քաղաքի եկեղեցուց, որը նույնպես կրում էր Ս. Հովհաննես Կարապետ անվանումը, զանազանելու համար նորակառույցը կոչվեց Նազարեթի եկեղեցի, իսկ հետագայում՝ Ս. Նազարեթ, որտեղ այսօր էլ գործում է Հայոց Մարդասիրական ճեմարանը:

Երկրորդ նիստը՝ «Իրանազիտություն» խորագրով, իր աշխատանքը շարունակեց ինստիտուտի նիստերի դահլիճում (նախագահ՝ պ. գ. թ. Գ. Խսկանդարյան): Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան՝ Օ. Մոնթագերին (Իրան) («Սասանյան Իրանում քրիստոնյաների դրության հարցի շուրջ»), Ո. Ազրոյանը («Սպիտակ եկեղափոխությունը» որպես Իրանի հա-

սարակական-քաղաքական ձգնաժամը հաղթահարելու գործուն միջոց») և Մ. Բաղդասարյանը («Խպամական հեղափոխության պահապանների Կորպուսի (ԻՀՊԿ) ստեղծումը և նրա դերը Իրանի զինված ուժերի համակարգում»): Եվ. Հարությունյանը «Ճապոնա-իրանական հարաբերությունները նավային երկրորդ ճգնաժամի ընթացքում» զեկուցման մեջ անդրադարձավ 1973-1974 թթ. նավային ճգնաժամի ժամանակ Սերձավոր Արևելքի երկրների նկատմամբ Ճապոնիայի իրականացրած քաղաքականությանը: Երրորդ նիստը՝ «Թուրքագիտություն» խորագրով, տեղի ունեցավ Թուրքիայի բաժնում (նախազահ՝ պ. գ. թ. Վ. Տեր-Մաթևոսյան): Ա. Քարտաշյանն իր «Դերսիմը և քեմալական Թուրքիան» թեմայով զեկուցման մեջ ներկայացրեց Քեմալական Թուրքիայի հանրապետություն հոչակվելուց հետո ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացված ձուլման և ոչնչացման քաղաքականությունը, ինչի արտահայտությունը դարձավ Դերսիմում 1936 թ. բռնկված ապստամբությունը: Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան Բ. Սովուեյանը («Բորչալուի զավառի (Լոռի) պատկանելության հարցը հայ-վրացական և հայ-աղքաղանական հարաբերությունների համատերսում (1918-1921 թթ.)») և Վ. Հարությունյանը («Ալիհների խնդիրը Թուրքիայում»): Լ. Մարիկյանը «Բանակ-հասարակություն փոխարաբերությունները Թուրքութ Օզալի կառավարման տարիներին» զեկուցման մեջ անդրադարձավ թուրքական բանակին, որը եղել է այս երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի վրա ազդող կարևորագույն ինստիտուտներից մեջը: Վ. Իվանովը հանդես եկավ «Թուրքիայի վրացական համայնքի հասարակական-քաղաքական կյանքի աշխատացման հարցի շուրջ (ընդհանուր դիտարկումներ)» զեկուցմամբ: «Թուրքիա-Ուզբեկստան միջպետական հարաբերությունները XX դարի վերջին և XXI դարի սկզբին» թեմայով զեկուցում կարդաց Ն. Մինասյանը:

Չորրորդ նիստը՝ «Արաբագիտություն» խորագրով, տեղի ունեցավ ինստիտուտի Արարական երկրների բաժնում (նախազահ՝ պ. գ. թ. Գ. Գևորգյան): Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան Ա. Դավթյանը («Օմայան առաջին դիրքենությունը մեկի շուրջ»), Գ. Վարդանյանը («Թյուրքական զվարդիայի ուսումնարարական իշխանությունն Արայան խալիֆայությունում (813-869 թթ.)») և պ. գ. թ. Ա. Գասպարյանը («Արաբ պատգամավորների գործունելությունն օւմանյան խորհրդարանում (1908-1909 թթ.)»):

Գիտական նատաշրջանի արդյունքներն ամփոփեց Սոնա Գրիգորյանը: Նա նշեց, որ գիտական նման նատաշրջանները շատ կարևոր են գիտական տարրեր կենտրոնների երիտասարդ արևելագետների, հայագետների և հետազոտողների համար՝ փոխադարձ ճանաչման առումով: Արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների XXX միջազգային գիտական նատաշրջանը զերազանցեց նախորդներին իր թեմաների ընդգրկման ծավալով ուշագրավ նորանոր հարցադրումներով: Վերջում գիտաժողովի բոլոր մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր: